

ՄԱՐԻԱՄ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ,
3-րդ կուրս

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. ազատ տնտեսական գոտի, ՕՌԻՆ, արտահանում, Չինաստան, Սինգապուր

Հոդվածում ներկայացվում են ԱՏԳ ստեղծման միջազգային փորձը, դրա հաջողված և ծախողված օրինակները, կատարվում են առաջարկություններ ՀՀ-ում ԱՏԳ-ների ստեղծման և դրանց արդյունավետ գործունեության վերաբերյալ:

Ազատ տնտեսական գոտիների հայեցակարգը ստեղծվել է դեռևս 1950-ականներին, երբ դրանք հայտնի էին որպես արտահանման, իսկ հետագայում՝ որպես ազատ գոտիներ: Չնայած այս տերմինաբանությանը, դրանց բովանդակությունը չի փոխվել: ԱՏԳ-ն ՀՀ կառավարության սահմանած հատուկ տարածք է, որը համարվում է ՀՀ մաքսային տարածքից դուրս և որտեղ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան: Ազատ տնտեսական գոտիներ ստեղծվել են աշխարհի շատ երկրներում, և գնալով դրանց թիվն աճում է: Դրանք տարբերվում են՝ կախված երկրի տնտեսական զարգացման, միջազգային առևտրում մասնագիտացման մակարդակից և այլ գործոններից: ԱՏԳ-ների վերաբերյալ շատ հետազոտություններ են կատարվել աշխարհի հարկապես հարուստ փորձ ունեցող երկրներում: Մինչդեռ ԱՏԳ-ների ստեղծման Հայաստանի փորձը շատ քիչ է ուսումնասիրված, որը, հավանաբար, պայմանավորված է դրա աղքատիկ լինելով: Սակայն, մեր կարծիքով, այդ խնդրի ուսումնասիրությունը կարևորվում է մի շարք առումներով. առկա խնդիրների ու խոչընդոտների, առավելությունների ու թերությունների բացահայտում, ինչպես նաև մեր երկրի համար դրանց արդյունավետության պարզաբանում:


Մեր կարծիքով, պետության համար, որպես ԱՏԳ հաջող գործունեության ցուցանիշներ, կարող են ծառայել հետևյալ հիմնական չափանիշները.

- ներգրավված ներդրումների ծավալ,
- բնակչության զբաղվածության մակարդակի փոփոխություն,
- արտահանման ծավալների և համակարգի փոփոխություն,
- բնակչության կենսամակարդակի բարձրացում,
- ԱՏԳ-ում արտադրվող արտադրանքի մրցունակության աճ:

Ուստի փորձենք գնահատել ԱՏԳ-ների ստեղծման արդյունավետությունը՝ ելնելով այս չափանիշներից: Որպես հաջողված միջազգային փորձ՝ դիտարկենք Չինաստանի օրինակը: Չինաստանը հայտնի է ազատ տնտեսական գոտիների ստեղծման իր հարուստ փորձով: Այսօր ԱՏԳ-ներ ունեն շուրջ 147 երկրներ, սակայն դրանց կեսից ավելին կենտրոնացած է Չինաստանում (2543 ԱՏԳ)²:


¹ «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

² UNCTAD, World investment report, chapter 4th, p. 129, 2019.



Գծապատկեր 1. ԱՄԳ-ների թիվն աշխարհում 1975-2018 թթ.¹

ԱՄԳ-ների ստեղծումը Չինաստանում սկսվել է դեռ 1980-ականներից (Shenzhen, Zhuhai, Shantou, Xiamen), երբ երկիրը ծեռնարկեց բարեփոխումների և բաց տնտեսության քաղաքականություն: Այս 4 քաղաքները հետագայում դարձան Չինաստանի տնտեսական աճի էպիկենտրոն: Շենգենի բնակչությունը 30000-ից (1979 թ.) աճեց մինչև 12 մլն (2018 թ.): 1990-2000 թթ. ԱՄԳ-ների քանակն ավելացավ, սակայն դրանք արդեն ստեղծվեցին ոչ թե ափամերձ շրջաններում, այլ երկրի ներսում տարածաշրջանային զարգացում ապահովելու համար: ԱՄԳ-ները զգալի ազդեցություն ունեցան Չինաստանի զարգացման վրա՝ նպաստելով երկրի տնտեսության՝ միջազգային շուկային ինտեգրմանը, արդյունաբերական զարգացմանը: Չինաստանի ՀՆԱ-ն 2000 թ. 1.2 տրիլիոն ԱՄՆ դոլարից հասել է 13,608 տրիլիոն ԱՄՆ դոլարի (2018 թ.)²:



Գծապատկեր 2. Չինաստանի արտադրանքի և ՕՈՒՆ-ների ցուցանիշները³

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը:

² <https://data.worldbank.org/country/china>

³ Տվյալներն ըստ www.unctad.org-ի, գծապատկերը կազմել է հեղինակը:

Այս տնտեսական հրաշքը մեծապես կապված է ՕՌԻՆ-ների հետ, որոնց զգալի մասը (45%) ներգրավվում է ԱՏԳ-ներում: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ Չինաստանի ՀՆԱ 22%-ը և արտահանման 60%-ը բաժին են ընկնում ԱՏԳ-ներին: ԱՏԳ-ներում ստեղծվել է շուրջ 30 միլիոն աշխատատեղ¹:

Ազատ տնտեսական գոտու օգտագործմամբ արտահանման քաղաքականության վարումը առավել հաջողությունների է հասել Սինգապուրում: Կառավարությունը կղզու մի շարք շրջաններ հայտարարել է որպես արդյունաբերական գոտիներ, այսինքն՝ ամբողջությամբ արտահանմանը նպատակաուղղված արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման համար ապահովված տարածքներ: Պետությունը ֆինանսավորում է արդյունաբերական ենթակառուցվածքի, ներառյալ ճանապարհների, էլեկտրաէներգիայի մատակարարման, ջրամատակարարման, կապի և հեռահաղորդակցման համակարգերի ստեղծումը և այլն:

Ազատ առևտրի և արդյունաբերական գոտիների ստեղծումն իրականացվում է հատուկ ծրագրի շրջանակներում, որի իրագործումը սկսվել է 1970 թ.-ին, երբ Սինգապուրի խորհրդարանը օրենք ընդունեց «Տնտեսության զարգացման խթանման մասին»: 80-ական թթ.-ի վերջին Սինգապուրում կազմավորվեցին 25 արդյունաբերական շրջաններ, որտեղ ստեղծվեց գրեթե 4 հազ. ձեռնարկություն:

90-ական թթ.-ի սկզբին արդյունաբերական գոտիներին էր բաժին ընկնում Սինգապուրի վերամշակման արդյունաբերական արտադրանքի արտահանման գրեթե 80%-ը: ԱՏԳ-ների ստեղծման արդյունքում արտահանման ծավալը 2,42 մլրդ դոլարից (1970 թ.) հասել է 642,295 մլրդ դոլարի (2018 թ.)²:

Այնուհանդերձ, հարկավոր է նշել նաև այն փաստը, որ կան երկրներ, որոնք, շատ ԱՏԳ-ներ ունենալով հանդերձ, արտահանման ծավալով զիջում են մյուս երկրներին, բայց երկիրը, որտեղ դիտվում է արտահանման ծավալների շարունակական աճ, չի կարող չունենալ թեկուզև մեկ ԱՏԳ: Սա ցույց է տալիս, որ արտահանման ծավալների մեծացման մեջ ԱՏԳ-ները բավարար գործոն չեն: Օրինակ՝ Մալայզիան, Կորեան, Մեքսիկան, որոնք ունեն ավելի շատ ԱՏԳ-ներ, քան օրինակ՝ Չիլին, արտահանման ծավալով զիջում են վերջինիս³:

Բացի արտահանման ծավալների մեծացման նպատակից, շատ երկրներում ԱՏԳ-ների ստեղծումն ունեցել է արտահանման բազմազանեցման նպատակ: Օրինակ՝ Կենտրոնական Ամերիկայի բազմաթիվ երկրներ ստեղծեցին ԱՏԳ-ներ՝ նվազեցնելու արտահանման կախվածությունը մրգի և բանջարեղենի ծավալներից:


Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ԱՏԳ-ների ստեղծումն այստեղ էական դեր կարող է խաղալ արտաքին առևտրի ցուցանիշների բարելավման գործում: Եթե դիտարկենք վերջին տարիների արտահանման և ներմուծման շարժընթացը, կտեսնենք, որ ներմուծումը մշտապես գերազանցում է արտահանման ծավալները: Բացի այդ, արտահանումն ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, և սա իրենից ներկայացնում է ռիսկ՝ տնտեսության զարգացման

¹ World Bank, China's special economic zones.

² <https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?locations=SG&start=1970&view=chart>

³ UNCTAD, World investment report, chapter 4th, page 181, 2019.

կայունության տեսանկյունից: Արտահանման գերակշիռ մասը հանքահումքային արտադրանքն ու պատրաստի սնունդն են: Հաշվի առնելով, որ բնական ռեսուրսները սահմանափակ են, կարելի է ասել, որ այս ապրանքախմբերը հեռանկարային չեն տևական տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից: Այստեղից էլ՝ բազմազանեցման անհրաժեշտությունը:



Գծապատկեր 3. ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ ապրանքների 2014-2018 թթ.-ին

Չինաստանի՝ ԱՏԳ-ների ստեղծման արդյունավետ փորձը ցույց է տալիս, որ աշխարհագրական դիրքը, ռեսուրսները, շուկան, աշխատուժը և կապիտալը կարևոր են հաջողակ ԱՏԳ ստեղծման համար: Սա ենթադրում է, որ ԱՏԳ-ները պետք է ստեղծվեն այնպիսի վայրերում, որտեղ ռեսուրսները և տրանսպորտը կլինեն հասանելի: Այս առումով, եթե դիտարկենք Մեղրու ԱՏԳ-ն, ապա կարող ենք ասել, որ աշխարհագրական դիրքի տեսանկյունից այն ճիշտ է ընտրված, քանի որ Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ, ունենալով առևտրի արտոնյալ ռեժիմներ ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ճապոնիայի, Շվեյցարիայի, այլ երկրների հետ, կարող է հետաքրքրություն ներկայացնել իրանական ընկերությունների համար, որոնք նպատակ ունեն իրենց արտադրանքով մուտք գործելու ԵԱՏՄ և եվրոպական երկրների շուկաներ, ինչպես նաև ԵԱՏՄ ու ԵՄ անդամ պետությունների ընկերությունների համար, որոնք նպատակ ունեն իրենց արտադրանքով մուտք գործելու իրանական շուկա: Սակայն, մինչ օրս այն չի շահագործվում հողային ռեսուրսների սահմանափակության պատճառով: Սա վկայում է պետական կառույցների և գոտու վարչակազմի միջև ոչ բավարար ինստիտուցիոնալ կապերի առկայության մասին:

Պետության աջակցությունը ԱՏԳ հաջողությանը համաաշխարհային փորձով հիմնավորված, սկզբունքորեն կարևոր փաստ է: Պետությունը պետք է ապահովի կադրերի հասանելիություն՝ մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստման համակարգի զարգացմամբ: Հատկանշական է Հնդկաստանի հաջող փորձը, երբ երկիրը շեշտը դրեց ծրագրավորման ասպարեզում բարձրագույն կրթության վրա՝ բազմակողմանիորեն զարգացնելով կրթության այդ ասպարեզը, համեմատաբար կարճ ժամկետում դառնալով ծրագրավորման

համաշխարհային կենտրոն: Պետությունը պետք է նաև միջոցներ ձեռնարկի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Չինաստանում ԱՏԳ-ն կարգավորող օրենքներն ազգային օրենսդրության ձևավորման նախահիմքն են: Բարեփոխումները և օրենքները նախապես կիրառվում և փորձարկվում են ԱՏԳ-ներում, այնուհետև ներառվում ընդհանուր օրենսդրության մեջ¹:

Կարևորվում է նաև ԱՏԳ ներկայացումը արտաքին շուկաներում մարքեթինգային գործիքների միջոցով: Անհրաժեշտ է ապահովել պետական պաշտոնական կապերի (տեղեկատվական, դիվանագիտական և այլն) լիակատար օգտագործում՝ գործընկեր պետությունների արդյունաբերական միություններին ԱՏԳ-ի մասին (մասնագիտացման ոլորտը, առավելությունները, պայմանները և այլն) տեղեկացնելու համար: Դա կարող է ներառել ճյուղային նախարարությունների պաշտոնական նամակները օտարերկրյա գործընկերներին, սփյուռքի ներգրավումը, ԱՏԳ-ի վերաբերյալ տեղեկատվություն հասցնելու նպատակով դեսպանությունների առևտրային (կոմերցիոն) բաժինների մասնակցությամբ շնորհանդեսները, հանդիպումները տեղական և արտասահմանյան գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ և այլն:

Ստորև ներկայացված են ԱՏԳ-ներին տրվող արտոնությունները:

Աղյուսակ 1

ԱՏԳ շահագործողներին տրվող մաքսային և հարկային արտոնությունները²

Երկիր	Արտոնություններ
Սինգապուր	Խոշոր կազմակերպությունները, որոնցում ներդրված է առնվազն 1 մլրդ սինգ. դոլ., ստանում են «պիոներ» կարգավիճակ և 5 տարով ազատվում հարկերից: Իսկ եթե դրանք արտադրում են արտահանվող արտադրանք, ապա արտոնությունները գործում են 10 տարի: Կազմակերպությունները, որոնք չունեն նման կարգավիճակ, բայց արտադրում են առնվազն 100 հզ. սինգ. դոլ. արժողությամբ արտադրանք, որից 20%-ը արտահանվում է, նույնպես 5 տարով ազատվում են հարկերից: Ներմուծման տուրքերը բացակայում են, արտահանումը հարկվում է ըստ ապրանքների խմբերի, իջեցված տոկոսադրույքով: Հումքի ներմուծման տուրքերը բացակայում են: Իսկ շահութահարկի դրույքաչափը 0% է:
Բանգլադեշ	Օտարերկրյա սեփականության թույլտվություն, ֆիզիկական անձանց եկամուտների հարկումից ազատում, 3 տարով, ներմուծման, արտահանման տուրքերից ազատում, 0% շահութահարկ, դիվիդենդների հարկումից ազատում:
Չինաստան	Եթե ընկերությունը շահույթ չի ստանում, ազատվում է հարկերից, իսկ շահույթ ստանալու տարվան հաջորդող 5 տարիների համար վճարում է իջեցված տոկոսադրույքով հարկեր, շահութահարկը՝ 15% (ԱՏԳ-ներից դուրս՝ 33%):
Հայաստան	ԱԱՀ-ն, տեղական հարկերը բացակայում են, 0% շահութահարկ, արժույթային սահմանափակումներ չկան, բացակայում են ներմուծման և արտահանման մաքսատուրքերը:

Նշված երկրներում տրամադրվող արտոնությունների պայմանական բնույթը կապված է օտարերկրյա ներդրողների մեծ հետաքրքրության հետ (ձևավորման փուլում այդ պետություններից մեծամասնությունում ևս առավելությունները կրում էին բացարձակ բնույթ): Օտարերկրյա մեծաքանակ ներդրումների ծավալի հոսքի դեպքում հայկական կառավարությունը նույնպես կարող է նմանատիպ կառուցակարգերի օգտագործման հնարավորություն

¹ Feng Yang, Examining Legislation in China's SEZ: Framework, practice and prospects, 2017.

² «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ հիմքի վրա ԱՏԳ ստեղծելու քիզնես ծրագիր:

ունենալ: Նշենք նաև Բանգլադեշում նախատեսված հարկային արտոնությունները, որով ԱՏԳ ռեզիդենտ կազմակերպությունների աշխատակիցները 3 տարվա ընթացքում ազատվում են ֆիզիկական անձանց եկամուտների հարկումից, որը խթանում է նոր աշխատատեղերի ստեղծումը և բարձր վարձատրվող աշխատակիցների ներգրավումը: Նմանատիպ (թեկուզ ժամանակավոր) արտոնությունների կիրառումը նպատակահարմար է, մասնավորապես, ազգային start-up-ների աշխատակիցների և նորարարական կազմակերպությունների համար, որոնք կարող են բիզնեսի ձևավորման փուլում ներգրավել բարձր վարձատրվող մասնագետներին: Առաջարկում ենք օրենքում ներառել այնպիսի կետ, որը ԱՏԳ աշխատակիցների համար կսահմանի հարկման հետընթաց (ռեգրեսիվ) սանդղակ (մասնագետների եկամուտները որոշակի գումարից բարձրի դեպքում ենթակա են հարկման ավելի ցածր տոկոսադրույքով):

Այլ երկրների փորձից ելնելով՝ հիմնական գործոնները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ԱՏԳ ստեղծման ժամանակ, բացի հարկային և այլ արտոնություններից, հետևյալն են.

- Բարենպաստ գործարար միջավայր (տարածքի մոտ լինելը խոշոր բնակավայրի, կրթական (բուհ, համալսարան) և տեխնոլոգիական (ԳՀԻ) կենտրոնների՝ որպես մտավոր ռեսուրսի մատակարարների, որակյալ կոմունալ ենթակառուցվածքի առկայություն (հարմարավետ գրասենյակային տարածքներ, տրանսպորտային հասանելիություն):

- ԱՏԳ որակյալ ենթակառուցվածքը՝
 - մաքսային ենթակառուցվածք (մաքսային ձևակերպումների և ընթացակարգի անցկացում տեղում),
 - արդյունաբերական ենթակառուցվածք (արդյունաբերական տարածքներ, ինժեներական ցանցեր և այլն),
 - «մեկ պատուհանի» ծառայություններ (պետական մարմինների կողմից գրանցման, թույլատվական և այլ փաստաթղթերի արագացված ձևակերպում),
 - պահեստային և լոգիստիկ ենթակառուցվածք (պահեստներ, պահեստային և լոգիստիկ ծառայություններ):

- Աշխատուժի ապահովում:

- Հանրային ծառայությունների ենթակառուցվածքի ապահովում (սոցիալական և կոմունալ)՝ խանութներ, ճաշարաններ, սրճարաններ, ռեստորաններ, բանկեր, ապահովագրական կազմակերպություններ, անվտանգության ծառայություն, տարածքի և շինությունների տեսահսկողություն, հակահրդեհային ծառայություն:

Բարենպաստ գործարար միջավայրի կարևորության ապացույցն է ՀՀ-ում գործող «Մերիդիան» ԱՏԳ-ի՝ որպես առաջին շահագործող գրանցված «Ինստիգեյթ ռոբոտիքս» ՓԲԸ-ի ԱՏԳ-ից դուրս գալը: Վերջինիս տնօրենի մեկնաբանմամբ՝ դուրս գալու պատճառներից մեկը հենց մաքսային ձևակերպումների բարդությունն էր, «մեկ պատուհանի» սկզբունքի բացակայությունը: Առաջարկում ենք ԱՏԳ տարածքում ստեղծել ՀՀ մաքսային մարմինների պահանջներին համապատասխանող և ժամանակակից սարքավորումներով հագեցած մաքսային տերմինալ, որը թույլ կտա հնարավորինս պակասեցնել մաքսային զննության և ընթացակարգերի ժամանակը:

ՀՀ ԱՏԳ-ներում առկա խնդիրներից մեկն էլ արդյունաբերական ենթակառուցվածքների բացակայությունն է: Օրինակ՝ «Ինստիգեյթ ռոբոտիքս» ՓԲԸ-ն առերեսվել էր արտադրված անօդաչու թռչող սարքերի փորձարկման համար անհրաժեշտ տարածքների բացակայության, ցուցահանդեսներում արտադրանքի ներկայացման և նմանատիպ այլ խնդիրների հետ:

Բացի վերոնշյալից, բարդություններ են առաջացել նաև տեղական մատակարար ընկերությունների հետ համագործակցության առումով: Չինաստանում ԱՏԳ-ները տեղական ընկերությունների հետ կապված են բիզնես կապերով, և փորձը ցույց է տալիս, որ նման ԱՏԳ-ներն ավելի հաջողված են: Հարավային Կորեայում կառավարությունն արտոնյալ պայմաններ է ստեղծում ԱՏԳ շահագործողների մատակարար հանդիսացող տեղական ընկերությունների համար¹:

ԱՏԳ զարգացման ծրագրերը պետք է ներառվեն ազգային կամ տարածաշրջանային զարգացման ռազմավարություններում, որպեսզի առավելագույնս համապատասխանեն երկրի մակրոմիջավայրին: Չինաստանը, Կորեան, Սինգապուրը սրա վառ օրինակն են: Այս երկրները ԱՏԳ-ներին վերաբերվում են որպես ազգային տնտեսության զարգացման կարևոր գործիքի:

ԱՏԳ ստեղծման և գործունեության համաշխարհային փորձը շատ հաջողությունների կողքին ունի նաև մի շարք անհաջող փորձեր: Անհաջողության պատճառ են դառնում, մասնավորապես, որոշակի սխալ հաշվարկները, որոնք թույլ են տրվում դեռևս նախագծման փուլում, և ԱՏԳ-ի վերաբերյալ կառավարության կողմից որդեգրված թերի քաղաքականությունը: Ամենատարածված սխալներն ու թերություններն են.

- անհրաժեշտ մակարդակի հաղորդակցման ուղիների բացակայությունը,
- արտոնյալ ռեժիմների ստեղծման հետ կապված՝ պետական կառույցների (ֆինանսների նախարարություն, մաքսային մարմիններ և այլն) և ԱՏԳ վարչակազմի միջև ոչ բավարար ինստիտուցիոնալ կապերը,
- ԱՏԳ տեղակայվածության անհաջող ընտրությունը,
- ԱՏԳ-ների գործունեության թերի օրենսդրական կարգավորումը,
- ոչ թափանցիկությունը, որը հանգեցնում է արտոնությունների չարաշահման,
- ԱՏԳ՝ ոչ արդյունավետ չափերի որոշումը (առաջին անգամ ԱՏԳ ստեղծող և այդ գործում փորձ չունեցող երկրների համար բավական դժվար է կազմակերպել մեծ գոտու կառավարումը):

Եզրակացություն

Ընդհանրացնելով ԱՏԳ-ների զարգացման համաշխարհային հաջողակ փորձը՝ կարելի է անել հետևություններ դրանց ստեղծման ծրագրերի հետևյալ առանցքային գործոնների վերաբերյալ.

- մասնավոր ձեռնարկությունների, պետական մարմինների, գիտակրթական համակարգերի, ֆինանսական ինստիտուտների և այլոց միջև տնտեսական կապերի զարգացում,
- պետության կողմից ԱՏԳ ձեռնարկություններին (ներդրողներին) աջակցում, մասնավորապես՝ հարկային և մաքսային արտոնություններ

¹ Douglas Zhihua Zeng, SEZ:Lessons from the global experience, page 13.

րի, պետական ներդրումների կամ վարկերի (արտոնյալ) ակտիվ օգտագործում,

- աշխատուժի որակավորում, գիտակրթական բազայի զարգացում,
- երկրի քաղաքական կայունություն,
- վարչարարական համակարգի պարզեցում (բիզնեսի վարման վարչարարական խոչընդոտների բացակայություն),
- ԱՏԳ մասնագիտացած կառավարում, դաշտը կարգավորող օրենքների առկայություն:

Առաջարկում ենք.

- ԱՏԳ տարածքում ստեղծել ՀՀ մաքսային մարմինների պահանջներին համապատասխանող և ժամանակակից սարքավորումներով հագեցած մաքսային տերմինալ,
- օրենքում ներառել այնպիսի կետ, որ ԱՏԳ աշխատակիցների համար կսահմանի հարկման հետընթաց սանդղակ,
- ԱՏԳ-ները ներկայացնել արտաքին շուկաներում՝ մարքեթինգային գործիքների միջոցով,
- ԱՏԳ զարգացման ծրագրերը ներառել ազգային զարգացման ռազմավարություններում,
- ստեղծել արդյունավետ արդյունաբերական ենթակառուցվածք,
- ապահովել պետական կառույցների և ԱՏԳ վարչակազմի միջև բավարար ինստիտուցիոնալ կապեր:

Գրականություն

1. «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք:
2. UNCTAD, World investment report.
3. Douglas Zhihua Zeng, SEZ: Lessons from the global experience.
4. www.worldbank.org
5. www.unctad.org

МАРИАМ АРЗУМАНЯН

Финансы, бакалавриат, 3-й курс

РОЛЬ СВОБОДНЫХ ЭКОНОМИЧЕСКИХ ЗОН В ЭКОНОМИЧЕСКОМ РАЗВИТИИ И ОСНОВНЫЕ ФАКТОРЫ, ОБЕСПЕЧИВАЮЩИЕ ИХ ЭФФЕКТИВНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ

Ключевые слова: *свободная экономическая зона, прямые
иностранные инвестиции, экспорт,
Китай, Сингапур*

В статье представлен международный опыт создания СЭЗ, его успешные и неудачные примеры, даны рекомендации по созданию СЭЗ в Республике Армения и их эффективному функционированию. Концепция свободных экономических зон была создана в 1950-х годах, когда они были известны как экспортные, а позже - как свободные зоны. Несмотря на это, их содержание не изменилось. СЭЗ - это особая территория, считающаяся вне таможенной территории Республики Армения, где хозяйственная деятельность осуществляется в соответствии с установленными законом особенностями. Свободные экономические зоны созданы во многих странах, и их количество растет. Они различаются в зависимости от экономического развития страны, уровня специализации международной торговли и других факторов. Было проведено множество исследований СЭЗ, особенно в странах с богатым опытом. Между тем, опыт Армении по созданию СЭЗ мало изучен. Однако, на наш взгляд, изучение этой проблемы очень важно с точки зрения выявления существующих проблем и препятствий, преимуществ и недостатков, а также эффективности для нашей страны.

MARIAM ARZUMANYAN

3rd Year, Bachelor's Degree, Finance

ROLE OF FREE ECONOMIC ZONES IN ECONOMIC DEVELOPMENT AND THE MAIN FACTORS ENSURING THEIR EFFECTIVE ACTIVITY

Keywords: *free economic zone, FDI, export,
China, Singapore*

The paper presents the international experience of creating FEZs, its successful and failed examples. Implemented recommendations on the establishment of FEZs in the Republic of Armenia and their effective operation are proposed. The concept of free economic zones was created in the 1950s, when they were known as export, and later as free zones. Despite this terminology, their content has not changed. FEZ is a special territory defined outside the customs territory of the Republic of Armenia, where business activity is carried out in accordance with the features defined by law. Free economic zones have been created in many countries and their number is growing. They differ depending on the country's economic development and international trade level of specialization and other factors. There has been a lot of research on FEZs around the world, especially in countries with rich experience. Meanwhile, Armenia's experience in creating FEZs is very little studied. However, in our opinion, the study of this problem is very important in terms of identifying existing problems and obstacles, advantages and disadvantages, as well as the efficiency for our country.